

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2005թ. հունվարի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրության ծավալն, ընթացիկ գներով, 2005թ. հունվարին կազմել է 69378.0 մլն.դրամ, իսկ դրա իրական ծավալի ինդեքսը 2004թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 103.6%` 2004թ. հունվարի 104.4% համապատասխան ցուցանիշի դիմաց:

ՀՆԱ-ի իրական ծավալի աճը հանրապետությունում պայմանավորված է տնտեսության բազային ճյուղերի աճով: Եթե 2004թ. հունվարին արձանագրվել էր տնտեսության բազային ճյուղերի իրական ծավալի անկում` 1.8 տոկոսային կետով, ապա 2005 թ. հունվարին արձանագրվել է աճ` 2.3 տոկոսային կետով: ՀՆԱ -ի հավելաճին ավելացված արժեքի արտադրության (հիմնական գներով) նպաստման չափը կազմել է 3.9 տոկոսային կետ, 2004թ. հունվարի 0.3 տոկոսային կետի դիմաց:

ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2005թ. հունվարին կազմել է 21577 դրամ, կամ 43.9 ԱՄՆ դոլար:

ՀՆԱ արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

(%)

	Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ		ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը (տոկոսային կետով)		ՀՆԱ-ի կառուցվածքը	
	հունվար					
	2004թ.	2005թ.	2004թ.	2005թ.	2004թ.	2005թ.
Ընդամենը, բազային ճյուղեր	98.2	102.3	-1.3	1.6	69.7	69.9
այդ թվում						
արդյունաբերություն	91.4	99.1	-2.7	-0.3	31.4	32.9
գյուղատնտեսություն	104.3	100.6	0.5	0.1	12.6	11.9
շինարարություն	74.2	100.2	-1.3	0.0	3.3	2.9
տրանսպորտ և կապ	109.3	112.3	0.6	0.8	6.4	6.2
առևտուր և հանրային սնունդ	109.7	106.3	1.6	1.0	16.0	16.0
Ընդամենը, այլ ճյուղեր	111.3	118.1	1.6	2.3	12.5	13.1
ՀՆԱ-ն հիմնական գներով	100.3	104.7	0.3	3.9	82.2	83.0
Ապրանքների (արտադրանքի) գուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	128.0	98.5	4.1	-0.3	17.8	17.0
ՀՆԱ-ն շուկայական գներով	104.4	103.6	4.4	3.6	100.0	100.0

Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

(%)

	Հունվար	
	Կառուցվածքը	
	2004թ.	2005թ.
Համախառն ներքին արդյունք	100	100
ապրանքներ	47.4	47.8
ծառայություններ	34.8	35.2
ապրանքների (արտադրանքի) գուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	17.8	17.0